



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 05Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 05Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ, 15-րդ և 25-րդ կետերը, «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 17-ի «Դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևերը հաստատելու մասին» թիվ 05Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագրում, 1-ին կետի «ա» և «դ» ենթակետերում «ծառայողի» բառից հետո լրացնել «և դատական կարգադրիչի» բառերը:

2. Որոշման 1-ին կետի «բ» ենթակետում «ծառայողի» բառից հետո լրացնել «և ղեկավար դատական կարգադրիչի» բառերը:

3. Որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

4. Որոշման 1-ին կետը լրացնել «ե» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«ե) դատական կարգադրիչի գործունեության գնահատման բնութագրի ձևը՝ համաձայն հավելված 5-ի՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:»:

5. Որոշման 2-րդ հավելվածում՝ «ԾԱՌԱՅՈՂԻ» բառից հետո լրացնել «ԵՎ ԳԵԿԱՎԱՐ ԳԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ» բառերը:

6. Որոշման 4-րդ հավելվածում՝ «ԾԱՌԱՅՈՂԻ» բառից հետո լրացնել «ԵՎ ԳԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ» բառերը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 15-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

2017թ. փետրվարի 14
ք.Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2017 թվականի փետրվարի 14-ի թիվ 05Լ որոշման

ԿԱՐԳ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության դատական ծառայողների (այսուհետ՝ Դատական ծառայողներ) և Հայաստանի Հանրապետության դատական կարգադրիչների (այսուհետ՝ Կարգադրիչներ) գործունեության գնահատման հետ կապված հարաբերությունները:

2. Դատական ծառայողների և Կարգադրիչների գործունեության գնահատումն իրականացվում է կիսամյակային գործունեության գնահատման (այսուհետ՝ Գործունեության գնահատում) միջոցով:

3. Դատական ծառայողի և Կարգադրիչի Գործունեության գնահատումը չպետք է լինի ինքնանպատակ և չպետք է կրի ձևական բնույթ, այլ պետք է լինի օբյեկտիվ, հստակ և սպառիչ գնահատական պարունակի Դատական ծառայողի և Կարգադրիչի պաշտոնին առաջադրվող բոլոր պահանջների կատարման վերաբերյալ:

4. Դատական ծառայողի և Կարգադրիչի Գործունեության գնահատումը պետք է ուղղված լինի վերջինիս կողմից իրականացվող գործունեության արդունավետության գնահատմանը, ներուժի ճիշտ օգտագործմանը, մասնագիտական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև աշխատանքները ռացիոնալ տեղաբաշխելու և արդյունավետ կառավարում իրականացնելու գործընթացի բարելավմանը:

5. Դատական ծառայողի և Կարգադրիչի Գործունեության գնահատման բնորոշիչները սահմանված են Գործունեության գնահատման բնութագրի ձևերով (այսուհետ՝ Բնութագիր), իսկ դրանց գնահատման չափանիշները սահմանվում են սույն կարգով:

6. Դատական ծառայողի և Կարգադրիչի գործունեությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝ գերազանց, լավ, բավարար, վերապատրաստման կարիք, անբավարար:

6.1. Գերազանց է գնահատվում, երբ Դատական ծառայողի և Կարգադրիչի կիսամյակային գործունեության կատարողականը գերազանցում է նախատեսված չափանիշները և աշխատանքային պարտականությունները:

6.2. Լավ է գնահատվում, երբ Դատական ծառայողի և Կարգադրիչի կիսամյակային գործունեության կատարողականը համապատասխանում է բոլոր ոլորտների համար նախատեսված չափանիշներին և աշխատանքային պարտականություններին:

6.3. Բավարար է գնահատվում, երբ Դատական ծառայողի և Կարգադրիչի կիսամյակային գործունեության կատարողականը գրեթե համապատասխանում է նախատեսված չափանիշներին և աշխատանքային պարտականություններին:

6.4. Վերապատրաստման կարիք է գնահատվում, երբ Դատական ծառայողի և Կարգադրիչի կիսամյակային գործունեության կատարողականը համապատասխանում է նվազագույն չափանիշներին և աշխատանքային պարտականություններին, և առկա է վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը:

6.5. Անբավարար է գնահատվում, երբ Դատական ծառայողի և Կարգադրիչի կիսամյակային գործունեության կատարողականը չի համապատասխանում նվազագույն չափանիշներին և աշխատանքային պարտականություններին:

7. Գործունեության գնահատումն իրականացնելու համար յուրաքանչյուր Դատական ծառայողի և Կարգադրիչի անմիջական ղեկավարը, իսկ դատավորին կցված Դատական ծառայողին՝ դատավորը, կազմում է Դատական ծառայողի և Կարգադրիչի Բնութագիր (համաձայն՝ սույն որոշման թիվ 2, թիվ 3, թիվ 4 և թիվ 5 հավելվածներով սահմանված ձևերի):

8. Դատական ծառայողի Բնութագիր կազմող պաշտոնատար անձը յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և ներկայացնում է դատական ծառայողի Բնութագիրը, համապատասխանաբար, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին կամ ՀՀ դատական ղեկարտամենտի ղեկավարին՝ դատարանի աշխատակազմի ղեկավարի միջոցով, իսկ կենտրոնական մարմնի ստորաբաժանման ղեկավարը՝ անմիջականորեն:

9. Կարգադրիչի Բնութագիր կազմող պաշտոնատար անձը յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և ներկայացնում է դատական կարգադրիչի Բնութագիրը ՀՀ դատական ղեկարտամենտի ղեկավարին՝ ՀՀ դատական կարգադրիչների ծառայության պետի միջոցով:

10. Գործունեության գնահատման արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը կամ ՀՀ դատական ղեկարտամենտի ղեկավարը Բնութագիրը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում Բնութագրի և մասնավոր կարծիքի (առկայության դեպքում) հիման վրա Դատական ծառայողների և Կարգադրիչների նկատմամբ կարող են կիրառել «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված խրախուսման որևէ տեսակ կամ ուղարկել լրացուցիչ վերապատրաստման կամ ազատել զբաղեցրած պաշտոնից:

11. Գործունեության գնահատման դրական արդյունքներով, համապատասխանաբար, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը կամ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարը կամ ՀՀ դատական կարգադրիչների ծառայության պետը յուրաքանչյուր կիսամյակից հետո՝ առաջին կիսամյակի համար մինչև հուլիսի 30-ը, իսկ երկրորդ կիսամյակի համար՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը, կարող են ընդունել պարգևատրման մասին համապատասխան որոշում:

12. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող, պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած Դատական ծառայողների և Կարգադրիչների Գործունեության գնահատումն իրականացվում է նրանց աշխատանքի ներկայանալու օրվանից վեց ամիս հետո՝ հերթական Գործունեության գնահատման ժամանակ:

13. ՀՀ դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունը ամփոփում է Դատական ծառայողների Գործունեության գնահատման արդյունքները և դրանք ներկայացնում է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին:

14. ՀՀ դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունը գործունեության գնահատման արդյունքներով լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող Դատական ծառայողների քանակն՝ առարկայական կուրսերի ընտրության նշումով, տրամադրում է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին:

15. ՀՀ դատական կարգադրիչների ծառայության անձնակազմի կառավարման բաժինը ամփոփում է Կարգադրիչների Գործունեության գնահատման արդյունքները և դրանք ներկայացնում է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին՝ ՀՀ դատական կարգադրիչների ծառայության պետի միջոցով:

16. ՀՀ դատական կարգադրիչների ծառայության անձնակազմի կառավարման բաժինը գործունեության գնահատման արդյունքներով լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող Կարգադրիչների քանակը տրամադրում է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին՝ ՀՀ դատական կարգադրիչների ծառայության պետի միջոցով:

17. Դատական ծառայողներին գործունեության գնահատման արդյունքներով լրացուցիչ վերապատրաստման դասընթացների ներգրավման գործընթացն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2017 թվականի փետրվարի 14-ի թիվ 05L որոշման

«Հավելված 5
Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2006 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 05L որոշման

Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

« » _____ 20 թ.
օրը ամիսը

Կարգադրիչ _____
(Անունը, ազգանունը)

Ստորաբաժանում _____

Պաշտոն _____

Դեկավար _____
(Անունը, ազգանունը)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Լ Բ Վ Ա

Ամբողջությամբ հասկանում է պաշտոնի համար նախատեսված պարտականությունները	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>
Տիրապետում է այն գիտելիքներին, որոնք անհրաժեշտ են աշխատանքը բարձր մակարդակով իրականացնելու համար	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>
Աշխատանքներն իրականացնում է պատշաճ, ճշտորեն, ամբողջությամբ, նախատեսված ժամկետներում	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>

Տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն	<input type="text"/>
Թիմային աշխատանք	<input type="text"/>
Հաշվետու լինելու ունակություն	<input type="text"/>
Հայերեն լեզվի տիրապետում	<input type="text"/>
Աշխատանքի արդյունավետության ընդհանուր վարկանիշը	<input type="text"/>

Մեկնաբանություններ

ՎԱՐՔԱԳԻԾ և ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Գ Լ Բ Վ Ա

Հետևում և պահպանում է վարքագծի և ծառայության համար սահմանված այլ կանոնները	<input type="text"/>
Պատասխանատու է իր գործողությունների համար	<input type="text"/>
Բարեկիրթ է դատավորների, ղեկավարների, գործընկերների, դատական ծառայողների, քաղաքացիների և այլոց հետ	<input type="text"/>
Ընդունում է կառուցողական քննադատությունն ու արձագանքները և պատրաստ է դրանք կիրառել աշխատանքի կատարողականը և որակը բարելավելու համար	<input type="text"/>
Ծառայողական կարգապահություն	<input type="text"/>
Առաջադրանքներն իրականացնելիս հուսալի է և պահպանում է տեղեկատվության գաղտնիությունը	<input type="text"/>
Վարքագծի և վստահության ընդհանուր վարկանիշը	<input type="text"/>

Մեկնաբանություններ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ Լ Բ Վ Ա

Հեշտությամբ ստանձնում է նոր պարտականություններ	□ □ □ □ □
Աշխատում է ինքնուրույն, ջանասիրաբար և հետևողական	□ □ □ □ □
Նպատակասլաց է և սահմանափակ վերահսկողության ներքո կարող է պատշաճ կատարել առաջադրանքները	□ □ □ □ □
Նախաձեռնողական է և առանց լրացուցիչ ցուցումների կատարում է ակնկալվող աշխատանքները	□ □ □ □ □
Կարող է հայտնաբերել առկա խնդիրները և աշխատում է նոր մտքեր, մոտեցումներ և լուծումներ առաջարկել դրանց վերաբերյալ	□ □ □ □ □
Առաջխաղացման ձգտում ունի	□ □ □ □ □
Նախաձեռնությունների ընդհանուր վարկանիշը	□ □ □ □ □

Մեկնաբանություններ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին
- Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին

Գնահատող

Անուն, ազգանուն

Ստորագրություն

Ամսաթիվ

Մեկնաբանություններ

Կարգադրիչ

Անուն, ազգանուն

Ստորագրություն

Ամսաթիվ

Մեկնաբանություններ

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

- Շնորհել ավելի բարձր դասային աստիճան
- Օրենքով նախատեսված խրախուսման որևիցե տեսակի կիրառում
- Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին
- Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ վերապատրաստում անցնելու եւ վերապատրաստման արդյունքում դրական գնահատական ստանալու պայմանով
- Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին

Հաստատում եմ՝ _____

Հաստատող անձը

Անուն, ազգանուն

Պաշտոն

Ստորագրություն

Ամսաթիվ

Մեկնաբանություններ

»: